Կոպեռնիկոս։

ըր միայն կը կարդացուէին NICOL... որ՝ Նիկողայոս անունին սկիզբն է։ Նա քարը վերուցին, ու Կոպերնիկոսի մէկ քանի ոսկորները Վարմիցի կանոնիկոսներուն տուին, մէկ քանին Ֆրաւէնպուրկի եկեղեցւոյն, մէկ մասն ալ Վարշաւի ուսումնական ընկերութեան։ Նա ընկերութիւնը աղէկ վարձատրութիւն ըրաւ Սնեատեցքի անունով լեհացւոյն, որ Կոպերնիկոսին վրայ ներբող մը շարադրեր էր. նոյն ընկերութիւնը Կոպերնիկոսին արձանը կանգնեց հարիւր յիսուն հազար ֆրանքով. ասոր օրինակը Թորվալտսէն քանդակագործը տուեր էր, Վարշաւի արհեստաւոր մըն ալ պղնձէ արձանը թափեց. Փարիզու մէջ ալ գեղեցիկ միտալ մը կոխել տուին։ Արդէն Նովոկրոտեք քաղքին իշխանը Թորն քաղաքին մէջ 1766ին Կոպերնիկոսին փառաւոր արձանը կանգնել տուեր էր, նմանապէս Սերաքովսքի անունով քահանան ալ ուրիշ արձան մը կանգնեց Կոպերնիկոսին Կրաքով քաղաքը։ Բայց աս մարդուն ամենէն փառաւոր արձանը իր անունն ու իր գրութիւնն է։

Հ. Յ. Դ.

ՈՒՍՈՒՄՆ ու գիտութիւնը բարի մարդուն ձեռքը թագաւորական գաւազան է, իսկ ցած մարդուն ձեռքը աւազակի լախտ է։

ՄՈՆԹԱՆԵԼ